ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 14.13/[182934]-14

ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՄՈՏ 2013 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-ԻՆ ԺԱՄԸ 15.00-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ «ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀՈԳԱԲԱՐՁՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

քաղ. Երևան
Մասնակցում էին՝

Վ. Գաբրիելյան	ՀՀ կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար
Կ. Հարությունյան	ՀՀ կրթության և գիտության նախարարի տեղակալ
Ա. Միրզախանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ
Ռ. Թոփչյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն
Ա. Ղազարյան	Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ
Վ. Քոչարյան	Երևանի պետական համալսարանի իրավագիտության ֆակուլտետի եվրոպական և միջազգային իրավունքի ամբիոնի վարիչ
Գ. Մարգարով	Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի տեղեկատվական անվտանգության և ծրագրային ապահովման ամբիոնի վարիչ
Հ. Գրիգորյան	«Այ Փի Էս Սի» ընկերության տնօրեն, սոցիոլոգ, ԵՊՀ-ի դասախոս
Ս. Սիմոնյան	ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության գլխավոր մասնագետ
Վ. Ասլանյան	ՀՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի վարչության գլխավոր մասնագետ
Ա. Ավետիսյան	«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի մամլո քարտուղար

«ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
«NATIONAL CENTER FOR PROFESSIONAL EDUCATION QUALITY ASSURANCE» FOUNDATION
ՄՈՏՔԵ N 4-01/14-007 21
«23» 01 2014 թ.

1. Որակի ապահովման եվրոպական գործակալությունների ասոցիացիայի փորձագիտական զեկույցի քննարկում և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝

1) ընդունել ի գիտություն Որակի ապահովման եվրոպական գործակալությունների ասոցիացիայի փորձագիտական զեկույցը.

2) հանձնարարել ՀՀ կառավարության աշխատակազմի սոցիալական վարչության պետ Ա. Միրզախանյանին՝ ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանին ներկայացնել հավատարմագրման կարգում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծ, որում ներառել նաև դրույթ 2015-2017 թվականների ՄԺԾԾ-ում հավատարմագրման արդյունքներն արտացոլելու մասին:

2. Հիմնադրամի հաստիքացուցակի քննարկում և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել հիմնադրամի հաստիքացուցակը:

3. Հիմնադրամի 2014 թվականի բյուջեի քննարկում և հաստատում

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հաստատել Հիմնադրամի 2014 թվականի բյուջեն:

4. Աուդիտորի ընտրության մասին

(Ռ. Թոփչյան, Տ. Սարգսյան)

Քննարկումներից հետո որոշվեց՝ հանձնարարել «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի տնօրեն Ռ. Թոփչյանին, համագործակցելով Հայաստանի արդյունաբերողների և գործարարների (գործատուների) միության նախագահ Ա. Ղազարյանի հետ, բանակցել «Գրանթ Թորնթոն Արմենիա» ընկերության ներկայացուցիչների հետ՝ հիմնադրամի տարեկան գործունեության աուդիտը պատվիրելու գնի (մինչև մեկ մլն դրամի շրջանակներում) շուրջ և ըստ այդմ գալ համաձայնության:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՐՉԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ